



ԵՐԿՈՒԵԱԲԹԻ, 2 ՆՈՅԵՄԲԵՐ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ պիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ԻՍԱՍՏՈՒԹԻՒՆ ՍՈՂՈՍՈՒՆԻ 1

ՓՆՏՈՒՆԸ ԶԱՍՏՈՒԱԾ ԵՒ ՓԱԽՁԻԼ ՄԵՂՔԷՆ

Սիրեցէ՛ք արդարութիւնը, երկրի դատաւորներ:
Բարին խորհեցէ՛ք Տիրոջ մասին
եւ պարզ սրտով փնտոցէ՛ք զԻնք:
Աստուած պիտի գտնէ անոնք,
որոնք չեն փորձեր զԻնք,
եւ պիտի յայտնուի անոնց,
որոնք թերահաւատ չեն:
Անիրաւ խորհուրդները
մարդս կը բաժնեն Աստուծմէ:
Իմաստուն եւ անբիծ հոգին
նենգութենէ կը փախչի,
ու կը մերժէ անմիտներուն խորհուրդները:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիանալաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն էս նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՊՈԹՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոսանքի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*



ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ



ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳՐԱՍԵՌԵՐԸ

- I. Աւերարաններ
- II. Գործք Առաքելոց
- III. Առաքելական Նամակներ կամ Թուղթեր

Առաքելական նամակները կամ թուղթերը յարույ գրական սեռ կը կազմեն Նոր Կրակարանի գիրքերու ցանկին մէջ: Անոնք առ հասարակ կը հետեւին սովորական նամակի ընդունուած կառոյցին, բայց եւ այնպէս նաեւ ունին իրենց ինքնուրոյն կերպերը:

Իւրաքանչիւր նամակ, անձնական կամ ընդհանրական, անոնց բաղկացուցիչ փարբերը կրնան փոխուիլ: Հիմնական փարբերը սակայն, որ կարելի է գտնել հետեւեալներն են.-

1. **Դիմումի ողջոյն:** Այսպէղ յիշուած կ'ըլլան նամակագրին ու հասցեատիրոջ անունները ու հանգամանքները, անոր հետ միասին Աստուծոյ ուղղուած գոհաբանական խօսքերով:
2. **Անձնական կամ պաշտօնական խնդրին ներկայացումը:** Այս բաժինը նամակին բուն նպատակը կամ բովանդակութիւնը կը կազմէ իր գանազան երեսներով: Ընդհանրապէս նամակէ նամակ կը փարբերի: Օրինակ, Փիլիմոնի նամակը գուր անձնական խնդիր կը շօշափէ, որքան ալ ընդհանուր սկզբունքային գիծեր ունենայ: Մինչդեռ հովուական նամակները հակառակ իրենց երեւոյթին անձնական չեն, իսկ միւս նամակներու պարագային կը զբաղին քրեական կամ ընդհանրական եկեղեցւոյ կեանքին կապուած քրեական ու գործնական հարցերով: Այս բաժինը նամակին ամենալայն բաժինն է:
3. **Կոչական-փառաբանական արտայայտութիւններ:** Քրիստոնէական առաջին համայնքներու ծիսական պաշտամունքային կեանքէն առնուած պատառիկներ են. «Ալելուիա», «Ամէն», «Տէր, Յիսուս Քրիստոս»:
4. **Օրհներգութիւններ:** Պաշտամունքային ծագում ունեցող արտայայտութիւններ են: Ասոնք կարճ ու կշռաւոր փողերով արտայայտութիւններ, ընդհանրապէս կապուած Քրիստոսի երկրորդ գալուստին, Անոր համբարձման, նախագոյութեան:
5. **Փառաբանութիւններ:** Ծիսական կեանքէ առնուած կամ ծանօթ աղօթքներու դրոշմը կը կրեն: Անոնք կրնան կարճ կամ երկար ըլլալ:
6. **Խոստովանութիւններ:** Հիմնականին մէջ քրիստոնէական կամ հաւաքի ճշմարտութիւններու յայտարարութիւններ, երբեմն ջապազովական բնոյթի, Հին Կրակարանեան գրականութեան ազդեցութիւնը կրող:
7. **Վարդապետական սահմանումներ:** Առ հասարակ Քրիստոսով իրագործուած փրկագործութեան դաւանութիւններ:
8. **Քարոզախօսական փարբեր:** Նպատակը հաւաքի հրաւիրել լսողները: Իրենց բովանդակութեամբ կը պատկերացնեն առաքելական շրջանի բերանացի քարոզախօսութիւնները:
9. **Ուսուցողական:** Հաւաքի կեանքի փոխարարութիւնը բացատրող, կեանքի փարբեր վիճակներու, կացութեանց մէջ հաւաքի գործնականացման անհրաժեշտ երեսը: Օրինակ, ընտանիք, ամուսնութիւն, բարոյական հարցեր, եկեղեցի, պաշտամունք, Աստուծոյ պարգեւները:
10. **Խրատական կամ յորդորական:** Նապատակը բարոյական ուղղութիւն, առաջնորդութիւն տալ:
11. **Ջապագովական:** Ընդդիմախօսական հերքելու սխալը եւ փոխանցելու ճշմարիտը:
12. **Վերջին բարեւներ եւ օրհնութիւն:**

ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՆ ՈՒՂՂՈՒՄԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ

Հարուստ ու հեղափոխական բովանդակությամբ Պողոս Առաքելի կողմէ գրուած Կորնթացիներուն առաջին նամակը մեզի կը ներկայացնէ, թէ ի՞նչպէս Պաղեստինեան միջավայրին մէջ ծնունդ առած ու Եբրայական մրաժոյժությամբ արտայայտուած Քրիստոսի վարդապետութիւնը փոխանցուցաւ հեթանոս աշխարհին, որոնք բոլորովին փարբեր էին իրենց ազգային, ընկերային ու մշակութային մրաժոյժությամբ: Այս բոլորը կը ներկայացուի Կորնթոսի մէջ նորահասարակ եկեղեցւոյ կեանքին ընդմէջէն, ուր նոր արարածներ, քրիստոնէաներ պիտի կերտուին:

Հարուստ ու հեղափոխական այս նամակը նաեւ այժմեական է մեզի համար, երբ մենք եւս, որպէս Քրիստոսի Եկեղեցին, կը փորձենք նոր ժամանակները եւ կեանքի նոր պայմաններէն ծնունդ առած նոր մրաժոյժութիւնները դիմագրաւել եւ պարասխան փալ օրը օրին ծագած նոր հարցերուն:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԿՈՐՆԹՈՍԻ ՄԱՍԻՆ

Հարաւային Յունաստանի ամենակարեւոր քաղաքներէն մէկը իր երկու նաւահանգիստներով: Արաւիկա նահանգի մայրաքաղաքը: Ք.Ա. 146թ. աւերուած Հռոմեացիներուն կողմէ, եւ հարիւր փարի երբ վերաշինուած Յուլիոս Կեսար կայսրի օրերուն: Կորնթոս քաղաքը ծաղկուն եւ հռչակաւոր էր վաճառականությամբ, արուեստներով, դրամարտունով, քաղաքական ու մշակութային եռուն կեանքով, իմաստասիրական ու կրօնական շարժումներով, որովհետեւ այնպէս կ'ապրէին ամեն ազգի քաղաքացիներ, որոնք նիւթական բարօրութիւն եւ յաջողութիւն կը հետապնդէին, փառասիրությամբ լեցուն: Ասոր կողքին նաեւ սանձարձակ անբարոյութիւնը: Ահա այս երեւոյթները նաեւ իրենց անդրադարձը կ'ունենային Կորնթոսի համայնքէն ներս, զանազան դժուարութեանց դուռ բանալով:

Քրիստոնէական եկեղեցւոյ հիմերը դրուեցաւ Պողոս Առաքելի քարոզությամբ, իր առաքելական 2րդ ճամբորդութեան ընթացքին, մնալով այնպէս 18 ամիսներ (50-52 թ.):

ՆԱՄԱԿԻՆ ՀԵՂԻՆԱԿԸ ԵՒ ԳՐՈՒԹԵԱՆ ԹՈՒՄԱԿԱՆԸ

Եկեղեցւոյ ու Աւանդութեան կողմէ ընդունուած էր որ նամակին հեղինակը Պողոս Առաքել ինք է: Պողոս ինք Աթէնքէն յետոյ Կորնթոս գալով, նախ փորձեց Հրեաներուն ներկայացնել, թէ Յիսուսը սպասուած փրկիչն է: Երբ անոնք ընդդիմացան ու հակառակեցան Պողոսին ու անարգեցին, Պողոս դարձաւ հեթանոսներուն: Այս իսկ պարճառով Կորնթոսի եկեղեցւոյ հաւաքացեալները մեծամասնութեամբ հեթանոսութենէ եկող Յոյներ են: Այս իսկ պարճառով Հրեաներ փորձեցին ամբաստարել Պողոսը եւ Կորնթոսէն դուրս դնել, ըսելով թէ իրենց Օրէնքին հակառակ բաներ կը սորվեցնէ, բայց յաջողեցան: Պողոս քիչ մը եւս մնաց յետոյ մեկնեցաւ:

Պողոս իր մեկնումէն յետոյ սկսաւ մրաժոյժիչ լուրեր առնել Կորնթոսի եկեղեցւոյ մէջ յարուցուած վէճերու, պառակտումներուն, հաւաքի ու բարոյականութեան կապուած երեւոյթներու մասին, որոնք եկեղեցւոյ կեանքը կը խանգարէին: Եւ ահա Պողոս չորս փարբեր նամակներ գրեց Կորնթացիներուն, որոնցմէ միայն երկուքը ունինք Նոր Կրակարանի ցանկին մէջ, իսկ միւս երկուքի մասին յիշարակութիւններ ունինք միայն (Ա Կորնթ 5:9-13, Բ Կորնթ 2:3, 7:8):

Առաջին նամակը գրուած է Եփեսոսէն, իր առաքելական 3-րդ ճամբորդութեան ընթացքին, այսինքն՝ 53-58 թ., այսինքն Պողոսի մեկնումէն 3-4 փարի յետոյ:

ՀԱՄԱՅՆՔԷՆ ՆԵՐՍ ԱՐԾԱՐԾՈՒՄԾ ՀԱՐՅԵՐ

Պողոս առաքելի հիմնական մրաժոյժութիւնը Եկեղեցւոյ կեանքէն ներս պառակտումներն ու անբարոյութիւնն են: Այսպէս կարելի է խմբաւորումներու բաժնել հարցերը:

1. **Կարգապահական:** Քրիստոսի խաչին քարոզութեան առաջնահերթութիւնը եւ մարդկային իմաստութենէն աւելի Աստուծոյ իմաստութիւնը փնտրելու եւ հասկնալու անհրաժեշտութիւնը, հպարտութենէն հեռու մնալու կարեւորութիւնը, Պողոսի առաքելական հեղինակութիւնը, իրաւասութիւններն ու պարտաւորութիւնները, Աստուծմէ կարգուած պաշտօնները եւ անոնց փոխայարաբերութիւնը:

2. **Բարոյականություն:** Արենապղծության դատապարտությունը, պոռնկություն է հեռու մնալու անհրաժեշտությունը, ամուսնանալու կամ ամուրի մնալու հարցը, իրարու միջև խնդիրները հեթանոսական դատարաններ չբանելու հարցը:
3. **Խղճի կապում:** Կուռքերու գոհում միս ուտելը կամ չուտելը, կռապաշտություն էն եւ կռապաշտական որոշ սովորություններէ հրաժարելու անհրաժեշտությունը, հեթանոս կողակիցի մը հետ մնալու կամ չմնալու հարցը, հեթանոս բարեկամներու հետ սեղանակցությունը:
4. **Ծիսական – Պաշտամունքային:** Եկեղեցոյ մէջ այր եւ կնոջ բաց թէ գոց գլուխով կանգնիլը, Տերունի ընթրիքը, մարգարեական պարգամախօսութեան փրութիւք կարեւորությունը:
5. **Քրիստոնէական հաւաքքին վերաբերող:** Առաքելներէն սրացում հաւաքքը եւ այդ հիման վրայ աճնապէս շինելու անհրաժեշտությունը, Եկեղեցոյ հասկացողությունը՝ իբրեւ Քրիստոսի մարմինը, Ս. Հոգիին պարգեւները, ու մանաւանդ գերագանցը՝ սէրը: Քրիստոսի յարությունը եւ մեռելներու յարությունը, յարուցեալ մարմնին բնոյթը:
6. **Գործնական քայլեր:** Երուսաղէմի եկեղեցոյ ի նպաստ հանգանակությունը, Պօղոսի անձնական ճամբորդութեան ծրագիրները, Տիմոթէոսի եւ ուրիշ գործակիցներու վերաբերող կարգադրությունները, յորդորներ եւ բարեւներ: